

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Տեղական հանձնախմբերը ստեղծվում են Հայաստանում և Սփյուռքի յուրաքանչյուր գաղութում՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աշխատանքները գործնականում կազմակերպելու համար:

1. Հանձնախմբերը ստեղծվում են հայաշատ բնակավայրերում կամ այլ առանձնահատկությունների առկայության դեպքում և գործում են հասարակական հիմունքներով:

2. Հանձնախմբի ստեղծման նպատակահարմարության և կազմի հաստատման վերաբերյալ որոշումը կայացնում է Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդը՝ գործադիր վարչության ներկայացմամբ:

3. Հանձնախումբը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով՝ ընդգրկելով տվյալ շրջանի ազդեցիկ հայկական քաղաքական, եկեղեցական, բարեգործական և հասարակական կազմակերպությունների լիազոր անձանց, ինչպես նաև ճանաչված և հարգանք վայելող անհատներին:

4. Տեղական հանձնախմբի հիմնադիր ժողովը հրավիրվում և գումարվում է ՀՀ նախագահի ներկայացուցիչների, Եկեղեցու և Հոգաբարձուների Խորհրդի անդամների (եթե տվյալ երկրից կան Խորհրդի անդամներ) կողմից համատեղ:

5. Հանձնախումբը լուսաբանում է Հիմնադրամի նպատակը, խնդիրները, նպաստում է դրամական և այլ հատկացումների հավաքագրմանը՝ կանոնադրությամբ սահմանված ձևերով:

6. Հանձնախումբը գործում է Հիմնադրամի կանոնադրության, Հոգաբարձուների Խորհրդի որոշումների, տվյալ պետության օրենքներին համապատասխան: Նրանց գործունեությունը համակարգում է Հիմնադրամի գործադիր վարչությունը:

16 Մայիսի 1992 թ.